ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1850-Ա « 09 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՊՑԻԳ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Երևանի և Լայպցիգի միջև մշակութային տարի հաստատելու մասին» համաձայնագրի շրջանակներում Լայպցիգի քաղաքապետարանի կողմից ստացված հրավերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի 06.04.2026 թվականի N Ն/21344-26 զեկուցագիրը՝ 2026 թվականի ապրիլի 20-24-ը կազմակերպվելիք մշակութային միջոցառումներին և Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թատրոնների ներկայացուցիչների համար կազմակերպվող մասնագիտական փորձի փոխանակման ծրագրին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2026 թվականի ապրիլի 20-ից 24-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաք հետևյալ կազմով.

Վերգինե Սիմոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ
Տաթևիկ Մկրտչյան	«Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Գոռ Մարգարյան	«Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

2.Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացնում է հրավիրող կողմը, բացառությամբ օրապահիկի, որն իրականացվում է «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Պատանի հանդիսատեսի թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ գիշերավարձի, որն իրականացնում է հրավիրող կողմը:

3. «Մեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն թատրոնի իրավաբան Տաթև Ավագյանին:

4. «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն թատրոնի փոխտնօրեն Խաչատուր Սիրադեղյանին:

5.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

6.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ